ՀԱԿԱԴՐՈՆԱՅԻՆ ԼԱՐԱՅԻՆ ԳԱԼԱՐԱՎԱՐԱԳՈՒՅՐ ԿԱՄԻԿԱՁԵ ԱԹՍ-ՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լարային հակադրոնային վարագույրը հուսալի խոչընդոտ է, որը թույլ չի տալիս թշնամու պտուտակավոր անօդաչու թռչող սարքերին ներթափանցել ստորաբաժանումների գտնվելու վայրը: Անօդաչու թռչող սարքերը (ԱԹՍ) խճճվում են պարանների մեջ և սովորաբար նույնիսկ չեն պայթում: Այսպիսով, վարագույրները թույլ են տալիս ոչ միայն պաշտպանել տեխնիկան և բլինդաժները, այլև հնարավորություն են տալիս որպես ավար ձեռք բերել անօդաչու թռչող սարքեր:

Ցանցերն ակնհայտորեն բավարար չեն, իսկ «հակադրոնային գալարավարագույրները» փոխարինում են ծառերի արանքում ուղղահայաց ձգված ցանցերին: Օգտագործվում են սովորական հյուսվածքով 4-5 մմ տրամագծով պոլիպրոպիլենային (պոլիեսթեր, նեյլոնե և այլն) լարեր կամ իմպրովիզացված նյութից պատրաստված լարեր:

Ուղղահայաց պարանների քայլքը մոտ 20-25 սմ է: 100 մետր (4 մմ) լարից ստացվում է հակագրոնային գալարավարագույր՝ 6x3 մ^2 մակերեսով: Տեղում մեկ կծիկից այսպիսի «գալարավարագույրի» պատրաստման համար անհրաժեշտ է 30-40 րոպե ժամանակ:



ԳԱԼԱՐԱՎԱՐԱԳՈՒՅՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) մարտիկների արդյունավետ պաշտպանությունն ամբողջ պարագծով,
2) արագ և հեշտ պատրաստում,
3) էժան նյութ,
4) նվազագույն ծավալ և քաշ,
5) դրոնները չեն ճայթում,
6) դրոնները խճճվում և ավար են դառնում,
7) չեն խանգարում ազատ տեղաշարժմանը:

Գալարավարագույրները կարելի է համատեղել սովորական կարթաթելի և նեյլոնե ցանցերի հետ:

Վերը նշված գծապատկերում տրված գալարավարագույրի հատուկ չափերը դոգմա չեն: Այստեղ պատկերված է տիպային չափը՝ 3x6 մ: Բայց այդ չափերը կարող են փոփոխվել ըստ անհրաժեշտության:

Ուղղահայաց պարանները կարելի է պատրաստել երկու անգամ ավելի կարճ (օրինակ՝ 1,5 մետր) և կախել «2 հարկերով», ինչպես այս սխեմայում:



-Որտե՞ղից կարող եք գնել:

– OZON-ից, Wildberris-ից, մեծածախ Osttex-ից և այլ արտադրողներից:

–3 մետրանոց պարանները կախվ՞ած են:

– Այո, և չափերը, իհարկե, պայմանական են ու «ստանդարտ»: Տեղում միշտ կարելի է դա փոփոխել: Հաստաբուն ծառին կապելու համար վերցվում ենք 10 մետր երկարությամբ պարան, եթե բուսականությունը նոսր է, պետք է տեղում ավելացնել ուղղահայաց հենարաններ:

- 20-25 սմ հեռավորությունը փոքր չէ՞: Միգուցե ավելի փոքր քայլք է պետք:

– 20 սմ-ից պակաս իմաստ չունի: Գալարավարագույրի մեկ գծային մետրի համար 5 ուղղահայաց քուղը բավարար է: Նույնիսկ 5 դյույմանոց պտուտակավոր փոքր դրոնների համար էլ դա առվել լայն է: Ճնշող մեծամասնության պտուտակները 7 դյույմ է:

– Ինչպե՞ս են ուղղահայաց պարանները կապվում հորիզոնականներին: Պարզ կրկնակի հանգույցո՞վ:

– Այո, բավարար է կապել պարզ կրկնակի հանգույցով:

Ազատ վիճակում կախված լինելու դեպքում, ուղղահայաց քուղերը հորիզոնական պարանին չեն կարող խճճվել, քանզի դրանց քաշը չափազանց փոքր է՝ 3 գ 1 մետր համար և շփումը թույլ չի տա, որ դրանք ինքնուրույն տեղաշարժվեն:

Ձեռքով տեղաշարժել հնարավոր է, սակայն ինքնուրույն նրանք չեն կարող շարժվել:



- Պե՞տք է ներքևից ծանրուկ կապել: Որպեսզի քիչ ճոճվեն:

– Լինում են դեպքեր, երբ կապում են, բայց դա պետք չէ: Երբեմն ծանրուկների առկայությունը ավելի վատ է, քանի որ պարանները հակված են խճճվել ծայրերում հենց ծանրուկների առկայության պատճառով:

Ահա այսպիսի տեսք ունի (ստորին լուսանկար) մարտիկների կողմից հակադրոնային ապաստարանի մուտքից ու ելքից կախված տասնյակ սովորական պարանները:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ

««Գալարավարագույրի» վերաբերյալ:

- երբեմն բավարարվում էինք ձեռք բերված պարաններով:

Դրանք և բարակ էին, և ավելի հաստ, բայց 3-4 մմ քուղը լավագույնս համապատասխանում է, որն ունի մի փոքր ավելի առաձգականություն և քաշ, ինչը թույլ չի տալիս նրան առանձնապես միահյուսվել հարևան պարանների հետ :

Այնպես որ, նշանակություն չունի, թե որ պարանն է: Նրանք բոլորը կծառայեն իրենց նպատակին: Միայն գույնի հարցը մնում է: Ավելի լավ է մուգ երանգները»:

Կարելի է «գալարավարագույր» պատրաստել տարբեր գույների քուղերից, ինչպես քողարկող ցանցը, կամայականորեն համատեղելով կանաչը, շագանակագույնը, դեղնավարդագունը, մոխրագույնը … Չնայած FPV դրոնները, միևնույն է, արագության տակ չեն կարող նկատել ուղղահայաց պարանները:

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ՓԱԹԵԹԱՎՈՐԵԼ ՊԱՏՐԱՍՏԻ ԳԱԼԱՐԱՎԱՐԱԳՈՒՅՐԸ

Հիմնականը փաթեթավորման մեջ պետք է ներառել ապրանքի նկարագրությունը (ինչ է դա և ինչի համար է նախատեսված) և գալարավարագույրների հավաքման սխեման : Հակառակ դեպքում կարող է խառնաշփոթ առաջանալ:

ԻՆՉՊԵՍ ԴԻՏԵԼ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ՈՐՊԵՍԶԻ ՓԱԹԵԹԸ ԲԱՑԵԼԻՍ ԳԱԼԱՐԱՎԱՐԱԳՈՒՅՐԸ ՉԽՃՃՎԻ

- Գալարավարագույրի վերին մասը հավաքեք փնջի մեջ,
- բռնեք վերին եզրից և բարձրացրեք վերև,
- հավաքված բոլոր կախովի ուղղահայաց թելերը միասին պտուտակաձև ոլորեք,
- ապա կրկնակի ճկեք,
- նորից կրկնակի ճկեք,
- կապեք ցանկացած ժապավենով (լարով),կպչուն ժապավենով և այլն:

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՐՏԵՂԻՑ ԳՆԵԼ

«Հակադրոնային գալարավարագույրի» համար պարան (քուղ) ձեռք բերելու ամենահարմար տարբերակը արտադրողի առցանց խանութից գնելն է՝ https://shop.osttex.ru/catalog/shnury-dlya-rukodeliya/polipropilenovye-shnury/ shnurpolipropilenovyy-s-serdechnikom-4mm-100m-shpt/ :

Մենեջերներից միշտ կարող եք պահանջել հարմարավետ երկարություն և ցանկալի գույն:

Մեծածախ առևտրի դեպքում ավելի էժան կլինի:

Ահա OZON-ից անվճար առաքմամբ 100 մետր մանրածախ վաճառքի արդյունքները՝ https://www.ozon.ru/product/osttex-verevka-belevaya-polipropilenovaya-100-m 589320595/

ՔՈՒՂԵՐԸ **ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ԱՆՊԱՅՄԱՆ ՄԻՋՈՒԿՆԵՐՈՎ ՀՅՈՒՍՎԱԾ**



Wildberris –ում՝ 200 մ 5 մմ և 100 մ 4 մմ.

Արտադրողի փորձի համաձայն՝ ավելի հարմար է գնել 20 մետր երկարությամբ քուղի ոչ մեծ կարժեր (мотки), քանի որ այն ավելի հեշտ է քանդել և կտրել, որովհետև քուղը հավաքված չէ գլանի վրա:

Անհրաժեշտության դեպքում, դուք միշտ կարող եք կապել կարճը ավելի երկարի հետ: 100 մետրանոց կարժերի (мотки) հետ գործ ունենալը միշտ չէ, որ հարմար է, նրանք հաճախ են խճճվում:

- Օգտագործվու՞մ է սովորական պոլիպրոպիլենային պարան, ինչպե՞ս ցուցադրված է ստորև ներկայացված լուսանկարում:

– Ձեզ անհրաժեշտ է ոլորված (ՀՅՈՒՍՎԱԾ) պարան ՄԻՋՈՒԿՈՎ, սովորաբար տարբեր գույների՝ խակի, մոխրագույն, շագանակագույն, սև և այլն:

Այս սպիտակ պլաստիկ պարանը, որը պատկերված է ստորև, հարմար չէ, քանզի պոլիպրոպիլենային չհյուսված լարը «չի աշխատում»:

ՀԱԿԱԱՆԴՐՈՆԱՅԻՆ ՔՈՒՂԱՅԻՆ ԳԱԼԱՐԱՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՊԱՐԱՆԱՅԻՆ ԷԿՐԱՆ)

…Կարող է կիրառվել անտառաշերտերում, գյուղական, քաղաքային կառույցներում: Այն կարող է կիրառվել ինչպես ինքնուրույն, այնպես էլ ձգված ցանցերի՝ առաջին արտաքին կամ երկրորդ, ինչպես նաև պաշտպանության լրացուցիչ շերտի հետ համատեղ:

Դրոններից և դրոնների պարսից պաշտպանվելու համար (երբ առաջին դրոնները պատռում են ձգված ցանցը, իսկ մնացածը մուտք են գործում դրանց հետևից) առաջարկվում է կիրառել պարզ, էժան, հեշտ արտադրվող և արդյունավետ կոնստրուկցիա:

Առաջին (կամ երկրորդ) «շերտում» առաջին ցանցից մի քանի մետր հեռավորության վրա, փոքր ծանրուկներով բարակ լարեր կախեք:

(Ծանոթագրություն: Փոքր ծանրուկները պարտադիր չեն և կարող են վատթարացնել արտադրանքը: Ծանրուկների առկայությունը կարող է պարանների խճճման պատճառ հանդիսանալ): Այսինքն՝ պարանների ծայրերին ամրացված բեռը պետք է լինի բավականին պարկեշտ և հպված լինի գետնին, կամ ընդհանրապես առանց դրա:

Ուղղահայաց քուղերի միջև հեռավորությունը միմյանցից 20-25 սմ է, որոնք պետք է կապված լինեն հորիզոնական ձգված (կրող) լարին: 5-6 մմ հաստությամբ պարանը (կրող քուղը) ձգվում է հորիզոնական, իսկ նրանից կախված ծանրուկներով քուղերը հիշեցնում են ամանորյա դրասանգե (гирлянды) «գալարավարագույրը»:

Քուղային վարագույրի մոտավոր տեսքը՝ դրասանգե (гирлянды) գալարավարագույրի համանմանությամբ: Միայն ուղղաձիգ լարերով՝ առանց լամպերի:

Եվս մեկ օրինակ քաղաքացիական կենցաղից: Վարագույր՝ «Լապշա-գալարա-վարագույր»:

Այսպիսի լրացուցիչ պարանային վարագույրը թույլ է տալիս անցնել դրա միջով, չի խանգարում մարտիկների տեղաշարժին, բայց թույլ չի տալիս դրոնների մուտքը:

Հատուկ չափերով և խնդիրներով հնարավոր է պատրաստել ինչպես թիկունքում գտնվող կամավորների աջակցությամբ, այնպես էլ 2-3-րդ բնագծերում գտնվող մարտիկները ջանքերով:

100 մետր երկարությամբ, 4 մմ հաստությամբ կարժից (моток) հյուսված պոլիպրոպիլենային քուղից, կարելի ստանալ գալարավարագույր, որը կծածկի մոտ 6x3 մ տարածք:

Քուղի ծախսը կազմում է 1 գծային մետրի համար 3 մետրանոց 5 կտոր քուղ:

6x3 մ չափի գալարավարագույր պատրաստելու համար ծախսում է մոտ 30 րոպե ժամանակ: Որպես ծանրուկ կարելի է օգտագործել 24 մմ տրամագծով մանեկներ (կամ զանգվածային արտադրությունում գտնվող ինչ-որ էժան բան) կամ էլ տեղում ձեռք բերված ցանկացած իմպրովիզացված նյութ: *(Ծանոթագրություն: Փոքր ծանրուկները պարտադիր չեն և կարող են վատթարացնել արտադրանքը: Ծանրուկների առկայությունը կարող է պարանների խճճման պատճառ հանդիսանալ): Այսինքն՝ պարանների ծայրերին ամրացված բեռը պետք է լինի բավականին պարկեշտ և հպված լինի գետնին, կամ ընդհանրապես առանց դրա:*

Անհրաժեշտության դեպքում ուղղահայաց պարանների ստորին եզրերը նույնպես կարող են միացվել հորիզոնական պարանով:

ՀԱԿԱԴՐՈՆԱՅԻՆ «ԳԱԼԱՐԱՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Որպես ուժեղացված տարբերակ, կարող եք օգտագործել 2 մմ հաստությամբ պողպատաճոպաններ. https://www.ozon.ru/product/tros-nerzhaveyushchiy-2-mm-izstali-a2-pletenie-7h7- metr-vsego-100-metrov-324202911

Ճոպանի համար սեղմակցորդիչներ. https://www.ozon.ru/product/zazhim-alyuminievaya-vtulka-din-3093-m2-dlya-trosa-2- mm-500-sht-423746371

Լուսանկար

Աղբյուրը՝ СОЛДАТ УДАЧИ: Веревочная антидроновая "штора" (Инструкция по изготовлению и описание)